

նէին յԵրուսաղէմ եւ հարկիւ ստիպէին կա-
 տարել զպատվէրն: Չոր յետ այսր ամենայնի
 յօժար կամօք եւ ուղիղ սրտիւ ծառայէր եւ
 սպասաւորէր սուրբ տեղեացն: Եւ յետ ա-
 ւուրց ինչ օրհնեցին քահանայ. եւ յետ ամաց ¹²⁰
 ինչ² աղերսիւ եւ հարկիւ յանձնեցին ի նա
 զվիճակս Հայոց եւ զամենայն հոգս եկեղեցոյն:
 Եւ խոճայք դարձան ի տունս իւրեանց: Իսկ նա
 օր ըստ օրէ յաւելոյր ի պահս եւ աղօթս եւ ի
 ճգնութիւնս. եւ նստեալ յաթոռն բազում բա- ¹²⁵
 րիս եւ երախտիս արար. զորս ի բազմաց
 սակաւս ատացից, զորս լուայ եւ զորս աչօք
 տեսայ:

ՇԻՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ ՊԱՐՈՆՏԵՐԻ

Նախ եւ առաջ զի նորոգեաց բազում եկե-
 ղեցիս ի վիճակն Հայոց, քաղաքն եւ ի դուրս՝ ¹³⁰
 թուով ԺԲ. եւ ի սուրբ Յակոբ, Հրեշտակա-
 պետն եւ սուրբ Փրկիչ շինեաց օթեւանս հիւ-
 բոց եւ հիւանդաց, եւ խուցս վիճաչէնս միա-
 բանից, դարպասս գեղեցիկս եւ սեղանատեղս
 վայելուչս, պարտէզս, այգիս եւ բուրաստանս. ¹³⁵
 եւ այլ բազում շինութիւնս եւ բարեկարգու-
 թիւնս. եւ զսուրբ Յակոբայ միջի ՅԿԵ խուցն,
 եւ գեկեղեցիս նոր նորոգեաց: Ի սորա ժամա-
 նակն բարգաւաճեալ պերճացաւ եւ վայելչա-
 ցաւ վիճակն Հայոց: ¹⁴⁰

124 աւելոյր: — 134 գեղեցիկ:

² Գրեղոր Պարոնէր եպիսկոպոս ձեռնադրուեցաւ
 Աւետիս կաթողիկոսէն 1613, Ապրիլ 5ին (Կոնդակ):